ԻՋԵՎԱՆԻ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕԾՈՒՄԸ

«Տուն իմ տուն աղօթից կոչեսցի»
(Մատթ. ԻԱ 13)

Օրերս վեր խոյացալ ևս մի սրբատաշ կառույց, մի եկեղեցի, որում պետք է համբուրվեն համբառնող մարդկային աղոթքն ու քուլա-քուլա երկինք ընթացող խնկի բույրը:

Նորակառույցը Իջևան քաղաքի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին էր, որի շինարարական աշխատանքներն իրականացվել էր Մայր Աթոռի և բոստոնաբնակ տեր և տիկին Գևորգ և Պերճուհի Ներսիսյանների նյութական աջակցությամբ ու տևել էր 1997 թ.-ի մարտից մինչև դեկտեմբեր: Ս. Ներսես Շնորհալի եկեղեցու կառուցման մեջ մեծ է ներդրումը Կանադահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ինչպես նաև Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի:

Սույն թվականի հուլիսի 22-ին, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Զուլչյանի տնօրինությամբ, որոշվել էր կատարել Իջևան քաղաքի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցու օրհնության և օծման արարողությունը: Նախորդ օրը, հուլիսի 21-ին, գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Զուլչյանի նախագահությամբ կատարվել էր նորակառույց եկեղեցու «Դռնբացեք»-ի արարողությունը, հընթացս որի հավատացյալների բազմությունը համապատասխան աղոթքների ու սաղմոսերգություններ ընթերցանության, հոգևոր շարականների երգեցողության ներքո հրավիրվել էր «աղոթքի տուն»:

Օրհնություն և օծում

Եկեղեցու օրհնության և օծման կարգն սկսվեց առավոտյան ժամը 11.00-ին: Արարողության հանդիսապետն էր Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ Սրբազանը: Ս. Ներսես Շնորհալի եկեղեցու օծմանը հաջորդեց անդրանիկ Սուրբ Պատարագը, որին ներկա էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման տոնակատարությանց 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Կանադահայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր: Ներկաների թվում էին նաև Տավուշի մարզպետ տիար Պավլիկ Ասատրյանը, Իջևանի քաղաքապետ տիար Արմեն Ղուլթաքյանը, ինչպես նաև մեծաքիվ հյուրեր, հավատացյալ հայորդիներ, ուխտավորներ:

Դպրաց երգչախումբը «Հրաշափառ»-ով դիմավորեց պատարագիչ Սրբազան Հոր գլխավորությամբ դեպի Սուրբ Խորան առաջնորդվող թափորին: Ս. Խորան բարձրանալուց հետո, պատարագիչ Սրբազանը, ձեռքը վերցնելով մյուռոնաթափ աղավնին, «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողությամբ Սրբալույս Մյուռոնը հեղեց բքնոցի մեջ: Ապա տոնականորեն զգեստավորված եպիսկոպոսները հաջորդաբար օրհնեցին ու օծեցին նորակառույց եկեղեցու սեղանը, պատերն ու դռները՝ ամենուր սրբագործելով Ս. Մյուռոնի դրոշմամբ:

Հավարտ օծման արարողության, Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընթերցեց Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի «*Օրհնութեան գիր*»-ը, որում Ն. Ս. Օծությունն Գարեգին Ա Կաթողիկոսն իր գնահատանքն ու հոգեկան ուրախությունն էր արտահայտում այս ուրախալից առիթով:

Մեր կյանքում եկեղեցու դերի ու նշանակության մասին հանգամանալից քարոզ խոսեց նաև պատարագիչ Սրբազան Հայրը: «Այլևս այս վայրը սուրբ է: Հայոց եկեղեցին ունեցավ ևս մի աղոթքի տուն, ուր հայ մարդը իր խոսքն է հղում առ Աստված»,- ասաց Սրբազան Հայրը՝ պատգամելով ներկա հավատացյալներին հավատարիմ մնալ հայրերի հավատքին: Թեմական Առաջնորդն իր երախտիքի խոսքն ուղղեց արարողությանը ներկա եկեղեցու բարերարներին՝ բոստոնահայ տեր և տիկին Գևորգ և Պերճուհի Ներսիսյաններին: Նրանց, ինչպես նաև Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի նվիրատվություններով և Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի ու Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի աջակցությամբ հնարավոր եղավ կառուցել եկեղեցին: Սեպուհ Սրբազանն իր քարոզի վերջում ընդգծեց. «Եկեղեցին կենցաղային վայր չէ՝, այլ աղոթքի տուն»: Սրբազան Հոր քարոզից հետո մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը:

Վերջում կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ եկեղեցու բարերարների երախտաժան ծնողների:

Այսպիսով, ևս մեկ եկեղեցի կյանքի կոչվեց՝ դառնալու հայորդիների հոգևոր մխիթարության օթևանը, բարկացածների հանգստարանը, սրբության կարոտով տոչորվածների բնակարանը:

ՍՐԲԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ.
ՅԱՆՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԱՐԵԳԻՆ ՍՐԲԱԶԱՆԸ ՍԿԻՀ Է ՆՎԻՐՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒՆ